ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. հասցե abovyan.kotayq@mta.gov.am

23-ը մայիսի 2025թ.

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ ՎԵՐՋԻՆ ԴԱՍԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Աբովյան համայնքի սիրելի՛ շրջանավարտներ, ուսուցիչներ, ծնողներ.

Ջերմորեն շնորհավորում եմ բոլորիդ Վերջին դասի՝ անմոռանալի և նշանակալից տոնի կապակցությամբ:

Աշակերտական տարիների ավարտն ազդարարող Վերջին զանգը շրջանավարտների առջև բացում է նոր ու մեծ կյանքի դռները, որտեղ սպասվում են առավել պատասխանատու, պարտավորեցնող ինքնուրույն քայլեր, միաժամանակ նոր գիտելիքներ ու ոլորտներ բացահայտելու մեծ հնարավորություններ:

Հարգարժա՛ն մանկավարժներ.

Վերջին դասը հիշարժան ու խորհրդանշական իրադարձություն է ոչ միայն շրջանավարտների, այլև ձեզ համար. այսօր հասուն կյանք եք ճանապարհում հերթական ներնդին, որին կրթել ու դաստիարակել եք նվիրումով՝ ներդնելով մեծ սեր ու ջանքեր: Ի սրտե շնորհավորում եմ և մաղթում՝ լինեք գնահատված ձեր շնորհակալ աշխատանքում:

Սիրելի՛ ծնողներ.

Շնորհավորում եմ ձեր ընտանիքներում նշվող այս գեղեցիկ օրվա կապակցությամբ: Կյանքի այս կարևոր ճամփաբաժանին մաղթում եմ ծնողական զգոնությամբ ու հոգատարությամբ ուղղորդեք ձեր զավակներին՝ հասնելու նշանակալից հաջողությունների և ձեռքբերումների:

Սիրելի՛ շրջանավարտներ.

Նոր կյանքի ճանապարհին ձեզ համար ուղենիշ ու ամուր հենասյուն դարձրեք ուսուցիչների փոխանցած գիտելիքներն ու խրատները, ծնողների անսահման սերն ու վստահությունը: Մեր երկրի պայծառ ու բարեկեցիկ ապագան կառուցողները դուք եք լինելու, ուստի եղե՛ք խոհեմ, արժևորե՛ք գիտելիքն ու կրթությունը և ձգտե՛ք լավագույնս մասնագիտանալ ձեր նախընտրած ոլորտներում:

Մեծ հույսերով և լավագույն սպասումներով մաղթում եմ ձեզ բարի երթ և կանաչ ճանապարհ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Է. ԲԱԲԱՅԱՆ**